ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 196 – Ա **18 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 43-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշումը

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ոլորտային մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ ըստ ոլորտների՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝ մոնիտորինգի և գնահատման կիսամյակային և տարեկան հաշվետվությունները կազմել յուրաքանչյուր տարվա տարեկան աշխատանքային պլանին և միջոցառումների ծրագրին համապատասխան ու ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
3. Աշխատանքային խմբի գործունեության համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Ոլորտային մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 43–Ա կարգադրությունը

18.05.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի մայիսի 18 -ի
N 196 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Մուշեղյան Յուրա	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ՝ ֆինանսական
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ՝ քաղաքաշինություն
Համբարձումյան Համբարձում	- մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ գյուղատնտեսություն և բնապահպանություն
Զազյան Կարեն	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ կրթություն, մշակույթ և սպորտ
Վարդանյան Լուսինե	- մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար՝ առողջապահություն և սոցիալական պաշտպանություն
Հարությունյան Վանիկ	- մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում
Մնացականյան Վարդուհի	- մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ արդյունաբերություն, ՓՄՁ ու մասնավոր հատվածի զարգացում, զբոսաշրջություն, ոլորտների ամփոփում և վերլուծություն
Շահբազյան Հասմիկ	- մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ քաղաքացիական հասարակություն
Հակոբյան Տիգրան	- մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ՝ արտակարգ իրավիճակներ և բնակչության ու տարածքների պաշտպանություն

Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ սոցիալական
Խաչատրյան Գևորգ	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ՝ ճանապարհաշինություն
Բիձյան Հակոբջան	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ՝ ջրամատակարարում ու ջրահեռացում, գազամատակարարում և էներգետիկա
Օհանյան Սիրաս	- մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ՝ բնապահպանություն
Սաֆարյան Համբարձում	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ՝ կրթություն
Չարվադարյան Գեղամ	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ՝ մշակույթ և սպորտ, երիտասարդության հարցեր

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

18.05.2020

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ